

Կ. Պոլսոյ, կը փորձէ գործածել իր ձեռք բերած հեղինակութիւնը՝ Կիլիկիոյ կաթողիկոսին վրայ, որովհետեւ, ինչպէս Դարանաղցի կ'ըսէ, «յորժամ ... եկաւ յԸստանբոյ պատրիարկ եղեւ զՍիսեոնէն» — Կիլիկիոյ կաթողիկոսը որմէ ինքն խոստամագիր առնելով թող տուած էր Սսոյ աթոռը բարձրանալ — «հե՛տ եքե՛ր, որ քնաւ չէր հաւաներ իւր արարեանցն, եւ յետոյ հրաժարեալ զնաց ի Սիս եւ ոչ հարցանել եւ կամ հրաման խրկողրէ յիւրեւ, ոչ ձեռագիր եւ ոչ երդումն, զիկնչ որ կամի՝ այնպէս կու առնէ եւ քնաւ ի մարդոյ կարգի չհամարելով, միկնչեւ այսօր ժամանակի»:

Ինչ որ Դարանաղցի իր Կեսարացիին դէմ ունեցած հակառակութեամբ հրճուանօք կ'ըսէ հոս, ցաւալի երեոյթ մըն է որ մեր եկեղեցիին համար աղետալի եղած է և Գրիգոր Կեսարացի այդ տխուր դրութեան վերջ տալու համար ըրած ջանքերով երբեք այպանելի չէ այլ զովելի: Դժբախտութիւն մըն է որ իր ձեռնարկը վիժած է և Կիլիկիոյ կաթողիկոսները Հայաստանեայց Եկեղեցւոյ միութեան սպառնացող դիրք մը շարունակած են գրաւել, տակաւին երկար ատեն:

Գրիգոր վրդ. Կեսարացի, ինչպէս տեսնուեցաւ, 1633 ին դարձեալ պատրիարք